

Սեյմա Լագերյոֆ



**ՆԻԼՍ ՀՈԼԳԵՐՍՈՆԻ
ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ
ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ՇՎԵԴԻԱՅՈՒՄ**

Նկարագարողունք՝ Մարտին վան դեր Լինդենի
Թարգմանությունը շվեդերենից՝ Աշխեն Բախչինյանի



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I

ՏՂԱՆ

ԹԶՈՒԿԸ

Մարտի 20, կիրակի

Ար–չկար, մի տղա կար: Տասնչորս տարեկան կլիներ, բարձրահասակ էր ու նիհար, բաց խարտոյաշ մազերով: Անբանի մեկն էր. սիրում էր միայն ուտել ու քնել, մեկ էլ՝ անկարգություններ անել: Մի կիրակի առավոտ տղայի ծնողները հագնվում էին, որ եկեղեցի գնան: Տղան, շապիկը հագին, սեղանի ծայրին նստած, մտածում էր, թե ինչ երջանկություն է, որ հայրն ու մայրը գնալու են իրենց գործերով, այնպես որ մի քանի ժամ ինքն իր գլխի տերը կլինի: «Հիմա կկարողանամ հորս հրացանը վերցնել ու հանգիստ կրակել. ոչ ոք չի խանգարի»,— ինքն իրեն ասաց նա: Բայց կարծես հայրը գուշակեց տղայի մտքերը, որովհետև շենքի մոտ կանգնած, արդեն գնալու պատրաստ՝ հանկարծ շրջվեց նրա կողմը:

— Քանի որ դու չուզեցիր մորդ ու ինձ հետ եկեղեցի գնալ,— ասաց նա,— ուրեմն կարծում եմ, որ փոխարենը քարոզը տանը կկարդաս: Խոստանում ես, որ կկարդաս:

— Հա՛, — ասում է տղան, — մեծ բան չէ:

Բայց, պարզ է, որոշեց, որ կկարդա այնքան, որքան ցանկանա:

Տղան մտածեց, որ մայրը երբեք այդքան հաստատակամ չէր եղել: Նա ակնթարթորեն մտտեցել էր պատի գրադարակին, վերցրել «Լյութերի մեկնություններն» ու դրել պատուհանի մոտ՝ սեղանին՝ բացելով օրվա քարոզի էջը: Բացել էր ու կողքին դրել նաև Ավետա-





— Տեսնես այս երեխան կարողանալո՞ւ է ինձ ազատել աղվեսի երախից,— մտածեց նա:

Այդ տանջահար վիճակում հանկարծ նրա կոկորդի խորքից կչկչոցի նման ձայներ լսվեցին, ասես ծիծաղելիս լիներ: «Չէ՛, ավելի շուտ առաջին իսկ ճեղքի մեջ կընկնի»,— մտածեց նա: Բայց ինչքան էլ մութ լիներ, տղան հստակ տեսնում էր սառույցի վրայի բոլոր ճեղքերն ու ճարպկորեն ցատկում էր դրանց վրայով: Մթության մեջ լավ էր տեսնում, քանի որ այժմ թզուկի տեսողություն ուներ: Նա նույնքան լավ էր տեսնում թե՛ լիճը, թե՛ ափը, ասես ցերեկ լիներ:

Այնտեղ, ուր սառույցն ափին ամենամոտոն էր, աղվեսը ցատկեց ափ, իսկ տղան բղավեց նրա հետևից.

— Ավագակի՛ մեկը, բաց թող սագին:

Սմիտեն չգիտեր՝ ով է բղավողը, բայց առանց ետ նայելու ավելի արագ սլացավ: Աղվեսը նետվեց հաճարենիների անտառ, տղան էլ հետևեց նրան՝ չանհանգստանալով վտանգների համար: Ընդհակառակը, անընդհատ հիշում էր, թե երեկոյան ինչպիսի արհամարհանքով էին իրեն նայում վայրի սագերը, և նա մեծ հաճույքով կուզենար ցույց տալ նրանց, որ մարդը, ինչքան էլ փոքր լինի, բոլոր արարածներից առավել է: Նա շարունակ բղավում էր շանը, որ որսը բաց թողնի:

— Էլ ինչ շուն ես դու, որ անամոթաբար սագ ես գողանում,— բղավեց նա:— Հենց հիմա բաց թող, թե չէ մի լավ ծեծ կուտես: Բաց թող, թե չէ ես քո տիրոջը կասեմ՝ ինչ վատ ես քեզ պահում:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark